գիրը: Նրա խօսքերը թէեւ անկապ էին, որպէս քրմուհու առեղծուածներ, բայց զուրկ չէին իմաստից. ես կարող եմ կազմակերպել այսպէս.

«Քո կեանքի ճանապարհը փուշերով է ծածկուած. ամէն մի քայլում դրած են քո առջեւ որոգայթներ. դու կընկնես նրանց մէջ, դարձեալ դուրս կը գաս, միշտ քաջութեամբ յաղթելով բոլոր դժուարութիւններին: Այդ կռիւը քո կեանքի մէջ կտեւէ երկար, մինչեւ քո գլխի սեւ մազերը ճերմակ գոյն կը ստանան, այն ժամանակ կզարկէ քեզ համար խաղաղութեան ժամը, եւ քո բախտի արեւը, որ այժմ ծածկուած է սեւ ամպերով, կրկին կծագէ իր բոլոր պայծառութեամբէ:

Նա կանգ առեց եւ բոպէական լռութիւնից յետոյ շարունակեց, «դու սիրում ես երկուսին, երկուսն էլ գեղեցիկ են, որպէս դրախտի անմահ աղջիկներ. նրանք խիստ տաք սրտով կապուած են քեզ հետ, բայց նրանցից եւ ոչ մէկը»...

— Բաւակա՛ն է, — կտրեցի ես նրա խօսքը. — գիտեմ ինչ պէտք է ասես...

Նա տխուր կերպով նայեց իմ երեսին եւ թողեց ձեռքս, երեւի վիրաւորուեց, որ ես արհամարհեցի նրա արհեստը, ասելով.

— Հիւբբի, դու խօ ամէնի համար այսպէս ես գուշակում:

Նա բաւականին հպարտ անձնասիրութեամբ պատասխանեց.

— Հիւբբին սուտ չի ասի. Հիւբբին խօսում է այն, ինչ որ յայտնում է նրան «գերագոյն ոգին»:

Մեր խօսակցութիւնը բոլոր ժամանակ, թէ Սուսանի եւ թէ մանուկ գուշակողի հետ պարսկերէն էր: Բայց նրանց կանոնաւոր արտասանութիւնից երեւում էր, որ նրանք չէին պատկանում բոշաների այն ցեղերին, որոնց շատ անգամ հանդիպել էի ես Պարսկաստանում: Նրանց երեսների թէ գծագրութեան նրբութիւնը, թէ կաշու գոյնը, որ աւելի սեւ չէր, թէ բնաւորութեան մեղմութիւնը, որ զուրկ չէր նոյն ցեղին յատուկ կրքոտ աշխուժութիւնից, — բոլորը ցոյց էին տալիս նրանց բոշաների մի աւելի ազնիւ եւ առանձին ցեղին պատկանելը: Բայց ինձ զարմացնում էր փոքրիկ աղջիկը: Սուսանը նրա մայրը լինելու համար բաւականին հասակաւոր էր. ուրեմն ո՞վ պէտք է լինէր նա: Ես հարցրի պառաւից. մինչեւ նա իր բերանը բացելը, Հիւբբին պատասխանեց զարմանալի արագախօսութեամբ.

— Հիւբբին Սուսանի թոռն է, Հիւբբին անբախտ աղջիկ է, նրա մայրը կորած է, Հիւբբին պտռում է իր մօրը, եւ նրա հայրը...

Պառաւը չթողեց նրան վերջացնել իր խօսքը եւ ինձ անծանօթ մի լեզուով սաստիկ բարկացաւ նրա վրայ. խեղճ աղջիկը իսկոյն սուս կացաւ: Ես